***

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

Անհոգ մանկութեան շատ լիշատակներ,
Որ դեռ եռում են իմ մատաղ կրծքում
Եւ յաճախ այնքան ուրախ րոպէներ
Ինձ պարգևում են տխուր ժամերում...
Որ երբեմն այնպէս անկեղծ հրճւանքով
Ցրւում են սրտիս ծանրացած վշտեր,
Երբ ես օրհնում եմ ոգելից երգով
Անցած մանկութեան ոսկի երազներ.—
Ո՞վ գիտէ, գուցէ ժամանակն իւր հետ
Այդ բոլորն անդարձ աւերի ենհետ...

Բայց այն օրերը, այն նւիրական
Խնկաբոյր ժամերն մանկական կեանքիս,
Երբ ինձ գգւում էր սէրը մայրական,
Մօրըս ջերմ կուրծքին հանգիստ առնելիս —
Այն օրերն, օ՛, մա՛յր, որպէս սուրբ աւանդ,
Յաւիտեան անջինջ կը մնան իմ սրտից.
Նոքա իմ կրծքում կը պահւեն ազատ
Զար ժամանակի աւերիչ ձեռքից.
Եւ ինձ կեանք տւող քո սէրը, մա՛յր իմ,
Սրտիս հետ միայն կը մտնէ շիրիմ։

Մոսկւա. 11 յունւարի, 1891 թ.